

ՂԵՎՈՆԴՅԱՆՑ ՏՈՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՍԻՆ

«Աստված համար հեշտ է քիչ մարդկանցով շարերի գործ կատարել և անարգների միջոցով՝ մեծամեծ բաներ անել» (Եղիշե): Այս հավատով էին առաջնորդվում Ղևոնդյանց քահանայք և Վարդանանց պատերազմի մյուս զորականները: Այո, թեպետև նրանք թագավոր չունեին իրենց առաջնորդելու և ո՛չ էլ դրսից եկող օգնական զորքեր, այդուհանդերձ բոլորն էլ միահամուռ ուժերով ի մի հավաքվեցին՝ պաշտպանելու իրենց հայրերի հավատքը և հայրենի սուրբ հողը:

Անդարակույս, այս պատերազմը որոշելու էր մի ողջ ժողովրդի գոյության խնդիրը. կամ պետք էր ազգովին հնազադվելին հաղկելու, կամ էլ հանուն ազգային ինքնության դիմադրածին զորեղ փրկակալին՝ նահապետության ճանապարհով ապահովելու իրենցից հետո եկող սերունդների ապագան: Այս ուղին ընտրեցին Ղևոնդյանք և Վարդանանք՝ ընթանալով իմացյալ մահով երկիրը պահելու ճանապարհով:

Շնորհիվ նրանց և նրանց արժանավոր հետևորդների՝ հայոց պատմությունը զարդարվեց փառք ու հպարտություն ներշնչող նոր էջերով, և ջրնդհարվեց խաչի և սրի, գրի ու գրակամության Ոսկեդարյան շրջան: Հայի մեր փեսակը ազգերի թափերաբեմ դարձած աշխարհի մեջ իր պարանոցի այս շրջալով է ճանաչվում ու գնահատվում ցայսօր: Հայ ժողովուրդը չդժեց Ղևոնդյանց և Վարդանանց ուխտը. Եկեղեցին իր սրբերի դասում արձանագրեց նրանց անունները, իսկ ժողովուրդը պահպանեց մաշկի գույն դարձած քրիստոնեական հավատքը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու փոնագույցով Ղևոնդյանց քահանայից փոնն այս փարի նշվեց փետրվարի 25-ին: Ձևավորված ավանդույթով, այդ օրը Մայր Աթոռում փեղի ունեցավ քահանայից հավաք:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր փնօրինությամբ գումարված քահանայից այս հավաքին ներկա էին Հայաստանյան թեմերում իրենց հոգևոր սպասավորությունը բերող բոլոր քահանաները: Ժողովի ընթացքում, որն արենապետում էր Ս. Միքայել եպ. Աջապահյանը, թեմակալ առաջնորդներն ամփոփ ներկայացրեցին իրենց թեմերում ծավալած գործունեությունը և բոլոր այն նախաձեռնությունները, որոնք մտր ապագայում կյանքի կկոչվեն: Այնուհետև բանախոսություններով հանդես եկան Ս. Բագրատ վրդ. Գալստանյանը և Ս. Տաթև արքեպս. Մարգարյանը:

Հոգեշնորհ Ս. Բագրատ վարդապետ Գալստանյանն իր «Ծեսը քարոզչության հզոր միջոց» թեմայով բանախոսության մեջ շեշտեց ծեսի անաղարտ կատարման կարևորությունը՝ ասելով. «Ծեսը առանցքն է քրիստոնեական կենցաղի, որով բնորոշվում է հայ քրիստոնյայի պաշտամունքը, որի միջոցով հարաբերվում են քահանան և ժողովուրդը՝ յոթ խորհուրդների կատարումով»: Հայր Սուրբը վկայակոչեց Խոսրով Անձևացու այն միտքը, թե՝ «Հոգևորականը բերանն է Աստծո և ժողովրդի: Հոգևորականը պետք է լինի այն անոթը, որով Սուրբ Հոգու շնորհները բաշխվում են ժողովրդին»: Առանց ծեսի Եկեղեցին գոյություն չունի:

Հոգեշնորհ Հայր Սուրբն ի մասնավորի անդրադարձավ ծեսի մեջ կատարվող կամայական կրճատումներին, որով աղճատվում է բուն խորհուրդը, այնինչ ծեսը համայնքի հոգևոր առողջության գլխավոր գրավականն է: Նշվեց նաև ծեսի մեջ որոշ վերափոխություններ

կարարելու մասին և, որ ամենից կարևորն է՝ մինչև բուն ծնար հավաքացյալին հոգևոր գիտակցության բերելով կարարվող խորհրդին մասնակից դարձնել:

Տ. Տաթև արքեպս. Սարգսյանի բանախոսությունը նվիրված էր հոգևոր հովվի բուն պարականությունների խնդրին, որ է՝ մեր Տեր Հիսուս Բրիստոսի առաքելությունը շարունակելը, որովհետև, ինչպես Սրբազանն ասաց՝ վկայակոչելով ավետարանական խոսքերը, «հունձն առաք է, իսկ մշակները՝ սակավ»:

Ընդգծվեց հովվի գործունեության չորս հիմնական ոլորտները՝ հոգևոր, ծիսական, կրթական և վարչական: Մակայն, ինչպես Սրբազանն ասաց, հովվի բուն առաքելությունը Հիսուսի գործի շարունակումն է՝ մարդկանց հոգիների փրկությունը, և այս առաքելության մեջ հոգևորականը հանդես է գալիս որպես միջնորդ, այսինքն՝ նրա պարականությունն է՝ մարդկանց Աստծուն մոտեցնելը, կապելը, որպեսզի Աստծով փրկվեն, որովհետև Նա է ճշմարտությունը: Այս գործում հոգևորականի միակ զենքը պետք է Սուրբ Գիրքը լինի և ապա եկեղեցական ավանդությունը: Դարևորվեց նաև ծիսական խորհրդի դերը, համայնքի կյանքում երկրասարդության գործուն մասնակցությունը, ժողովրդի կյանքում ազգային մշակույթի, սովորությունների պահպանումը, հայրենիքի սրբազան գաղափարը դրոշմելը:

Այնուհետև ժողովականները Կեհայանի հանդիսատեսին, որտեղ քահանաներն իրենց հուզող հարցերով դիմեցին Վեհափառ Հորը: Նորին Սրբությունն ըստ ամենայնի պարասխանեց նրանց հարցերին: Վեհափառ Հայրապետը, ամփոփելով Կեհայանի ունեցած քննարկումները և իր պարզամտ ուղղելով հոգևորականներին, ասաց.

«Միտևի հոգևոր Հայրեր, կրկին Մեր ուրախությունն ենք հայրնում, որ Սուրբ Ղևոնդյանց Կոնի խորհուրդը այսօր համախմբել է մեզ: Նախ և առաջ Մեր գնահատանքն ենք ուղղում հայաստանյան թեմերի Առաջնորդ Հայրերին, ովքեր Միքայել Սրբազանի պարասխանարվությամբ կազմակերպեցին այս հավաքը և Կոնական հանդիսությունը: Մեր գնահատանքը՝ օրվա բանախոսներին, որ իրենց խոսքով մեկ անգամ ևս պարզեցին մեր առջև 5-րդ դարի հայ իրականությունը և այն կարևոր դերակատարությունը, որ ունեցավ մեր պարսության մեջ հայոց հոգևոր ազատամարտը:

Արդարև, այսօր մեր բոլորի հայացքի առջև հառնում են Ղևոնդյան քահանայք և Սուրբ Վարդանանք, մանավանդ՝ առավել ակնառու, երբ եսայում ենք Ավարայրի մարտը պարկերոդ գործելնին, որը զարդարում է այս դահլիճը: Այսօր մեր սուրբ նախնայաց լուսեղեն կերպարները հառնում են ողջ վեհությամբ հավատալի իրենց հոգու, որը նրանց առաջնորդեց պաշտպանելու քրիստոնեական մեր հավատը և հայոց հայրենին: Նրանք մարտի ելան այն վստահությամբ, որ ո՛չ իրենց ժամանակ և ո՛չ իրենցից հետո որևէ ժամանակ ոչ ոք չի տեսնելու հայոց ուրացությունը, ինչպես իրենց նահապարկությունից առաջ ասել է Ղևոնդյան քահանաներից Սահակ եպիսկոպոսը:

Ղևոնդյանք ուրախ սրտով ընդունեցին Բրիստոսի համար նահապարկությունը, ունենալով այն համոզումը, որ մեր Փրկիչը միշտ հարուցյալ պիտի պահի մեր ժողովրդին: Նրանք չվարանեցին իրենց կյանքը զոհաբերելու, քանզի ունեին գիտակցությունն ու հավատը մահը մահով հաղթելու: Հարության հավատը, այն է՝ այն մեծագույն ժառանգությունը, որ ավանդել են մեզ Ղևոնդյան քահանայք՝ մեր

նախնիները, մեր Եկեղեցու սրբերը, ում բարեխոսությունը Տիրոջ մոտ հայցում ենք այսօր, որպեսզի հավատքի նույն զորությամբ ծառայենք մեր Եկեղեցուն ու մեր հայրենիքին:

Այսօր քիչ չեն հայ Եկեղեցու առջև կանգնած մարտահրավերները: Մեր ճանապարհին երբեմն տկարանում ենք, երբեմն մեր հոգևերն են խանգարում մեզ, սակայն մեզ համար օրինակ են Ղևոնդյանց քահանայք, ովքեր ավելի չունեին, քան մենք: Եթե մենք ուզենք, Ղևոնդյանց ոգին միշտ պիտի օգնի ու զորացնի մեզ հոգևոր մեր կոչման ու ծառայության ճանապարհին: Վնչեցնենք մեր հոգիներում Հարդանանց ու Ղևոնդյանց ոգին, ապրենք վասն Մսուսի, վասն հայրենյաց նույն սիրով ու նվիրումով, և դժվարությունները կնահանջեն, մենք չենք սխալվի մեր որոշումներում, և մեր առաքելությունը ուղաիւրեւաց ու արգասաբեր կլինի մեր ժողովրդի կյանքում, ազապ մեր հայրենիքի վերակառուցման, հոգևոր զարթոնքի ճանապարհին, երբ ձեռք ենք բերել հաղթանակներ:

Այսօր կարևոր խնդիր է եկեղեցաշինությունը, քանզի մեր եկեղեցիներից շատերը դեռևս խոնարհված են և նորոգության կարիք ունեն: Ծար համայնքներում ընդհանրապես եկեղեցիներ չկան, իսկ նորերը կառուցելու համար միջոցները սուղ են: Ներկառար, ավելի քան կարևորվում են կրթադաստիարակչական աշխատանքները, որպեսզի հավատը զորավոր լինի մեր ժողովրդի հոգում, և երբ կառուցվեն նոր եկեղեցիները, միշտ լեցուն լինեն մարդկանցով:

Մենք բավական առաջընթաց ունենք քարոզչական ասպարեզում, և Մեր խնդրանքն է, որ դուք անձնվեր կերպով շարունակեք այն: Մեր գնահատանքն ենք բերում Աբրահամ Սյրբազանին, ում ղեկավարությամբ արդեն հրապարակվել են հանրակրթական դպրոցների 4-րդ և 5-րդ դասարանների համար պատրաստված դասագրքերը և պատրաստության ընթացքի մեջ են 6-րդ, 7-րդ և 8-րդ դասարանների դասագրքերը: Այսօր մեզ օգնելու է գալիս հոգևորականաց նոր սերունդը՝ նոր խանդավառությամբ, և մենք բոլորս պարասխանաբարության ամենախոր զգացումով պիտի ձեռնամուխ լինենք մեր ծրագրերի իրականացմանը:

Մեր առաքելության իրականացման ճանապարհին մեզ ոչինչ չի խանգարում, պեղական հասարակություններն էլ ընդառաջում են մեր դիմումներին, որի վկայությունները կարող եք տեսնել ձեր թեմերում: Մենք է գործելու նոր ուղիներ փնտրել ու գտնել, անձնորի ու նախանձախնդրորեն աշխատել:

Վերստին Մեր շնորհավորանքները, բարեմաղթություններն ու օրհնություններն ենք բերում ձեզ: Հայցում ենք Տիրոջից, որ մեր մեջ ամրացնի Ղևոնդյանց ոգին, զորացնի մեզ՝ հաղթահարելու մեր ճանապարհին հանդիպող բոլոր խոթերն ու արգելքները և հավատով, սիրով ու նվիրումով առաջնորդելու հոգևոր կյանքը մեր ժողովրդի»:

Վերջում Վեհափառ Հայրապետը Հայաստանում գործող բոլոր քահանաներին, որպես նվեր և հիշարարկ այս հանդիպման, բաժանեց մի քանի հոգևոր-ծիսական գրքեր:

ԾԵՐՈՒՆ ՍՐԿ. ՄԿՐՏՁՅԱՆ